

«Իր սադրիչ հայտարարություններով և գործողություններով աչքի ընկած Ալիևը խոսում է խաղաղության, Հայաստանի տարածքով Նախիջևանի հետ ցամաքային կապ հաստատելու մասին: Շատերը երևի չգիտեն, որ Նախիջևանը պատմական Հայաստանի մասն էր: Լավ կաներ հիշեր, թե ի՞նչ դաժան ճակատագրի արժանացան նույն Նախիջևանի հայերը և ինչպես ավերվեցին հայկական խաչքարերը, գերեզմանատները: Իսկ իրավիճակը լարել և լարում է հենց Ալիևը՝ պատերազմ հրահրելով, Բաքվի հրապարակում հայտարարելով, թե իբր իրենց պատմական տարածքներն են Չանգեզուրը, Սևանը և Երևանը: Այնպես որ՝ Ալիևի խոսքերը ես համարում եմ կեղծավոր» . ՌԴ Պետդումայի պատգամավոր Կոնստանտին Չատուկին:

Ուրբաթ
30 հուլիսի 2021թ.
№ 15 (557)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՏՐ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՍԽԱՆՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
2 1 0 1 5 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

**Սեփական ուժերով
ինքնապաշտպանվելու
անընդունակ
ժողովուրդները
պատժվում են
մահվամբ:**

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ

**Կառուցապատմամբ
զբաղվող ընկերու-
թյունների համար
օժանդակության
նոր գործիքակազմ է
ներդրվում**

Կառավարությունը կորունավորակա տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման մասին որոշման մեջ փոփոխություն կատարեց:
Էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Վահան Քերոբյանը նշեց, որ փոփոխություններով թույլ են տալիս, որ այս ծրագրից օգտվեն Սյունիքի մարզում կառուցապատում իրականացնող ընկերությունները: «Նախկինում կառուցապատման ոլորտը չի մտել այս ծրագրի մեջ, բայց հիմա մենք ուզում ենք խրախուսել այն կառուցապատողներին, որոնք Սյունիքի մարզում կառուցապատում են իրականացնում: Մենք փոխում ենք ծրագրի տրամաբանությունն այնպես, որ դրա շահառու դառնան այն ընկերությունները, որոնք դեռ չեն վերականգնվել կորունավորույթի և պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական դժվարություններից: Դրա համար այս հատվածի համար որպես նպատակ սահմանել ենք հարկային ու վարկային ներկա և ապագա պարտավորությունների կատարումը: Դրանով ուզում ենք ընկերություններին մոտավորապես 6 ամսվա թթվածին տալ, որ նրանք կենտրոնանան վերականգնվելու պրոցեսի վրա ու ծանրաբեռնված չլինեն վարկային ու հարկային ժամկետանց և ընթացիկ պարտավորություններով», – ասաց նախարարի պաշտոնակատարը:

Նրա խոսքով՝ կարևոր պայման կա. այդ ընկերությունները 90-օրյա ժամկետում պետք է դառնան բաժնետիրական ընկերություններ ու սկսեն ներդնել կորպորատիվ կառավարման սկզբունքները: Նաև ավելացվել է ֆինանսավորման ընդհանուր չափը, որը 250 մլն դրամից բարձրացրել է 1 մլրդ դրամի:

Վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը նշեց, որ այս ծրագրով վարկերի տոկոսների սուբսիդավորում է իրականացվում:
22.07.2021

680 մլն եվրո՝ Սյունիքի դարպասների ամրացման և հարավի ճանապարհաշինության համար

Այդ գումարը Եվրամիության՝ Հայաստանին հատկացվող 2.6 մլրդ եվրոյի մի մասն է, որը ծախսվելու է երկրի ամենազգայուն հատվածներից մեկում՝ սահմանային գյուղերի խնդիրների լուծման համար:
Մոտ 600 միլիոնով կնորոգվեն ճանապարհներ ու կկառուցվեն նորերը, 80 միլիոն էլ կհատկացվի զբոսաշրջության զարգացմանը, մարզի գրավչության մեծացմանը, նաև գյուղատնտեսական ու էներգետիկ ծրագրերի:



Հայոց ազգային բանակ մեկնեց կապանցի, գործիսեցի և սիսիանցի զորակոչիկների հերթական խումբը

2 որակչային ամեն մի միջոցառում Սյունյաց աշխարհում ավանդաբար յուրօրինակ տոնախմբության է վերածվել...

Թվում էր, սակայն, թե Արցախյան երրորդ պատերազմից ու նվաստացուցիչ կապիտուլյացիայից հետո զորակոչին վերաբերող իրադարձություններն այնքա կորցնելու են իրենց երբեմնի կարևորությունն ու իմաստը, և անցյալի ոգևորությանն ու խանդավառությանը փոխարինելու են ընկճվածությունը, անհուսությունը: Մինչդեռ, փանթ Բարձրյալին, սյունեցի պատանիները, հավատարիմ նախնյաց հերոսական ավանդույթներին, հայոց ազգային բանակ են մեկնում ընդգծված ոգևորությամբ, քաղաքացիական պարտքը կատարելու վճռակալությամբ:

Այդ ամենին վերստին ակնատես եղանք

հուլիսի 21-ին. Գործիսցի բանակ մեկնեց կապանցի, գործիսեցի և սիսիանցի զորակոչիկների հերթական խումբը՝ 35 հոգուց բաղկացած: Մինչ այդ անհնար էր չկատել, թե նախապատրաստական ինչպիսի արդյունավետ աշխատանք է կատարել ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանում՝ փոխգնդապետ Վահե Աղալարյանի գլխավորությամբ:

– *Չորակոչիկներից յուրաքանչյուրի խնդիրներին անձամբ եմ ծանոթացել, ականջալուր եմ եղել ծնողներին և պատասխանել նրանց մտահոգող հարցերին կամ կարգավորել դրանք*, – ասաց Վահե Աղալարյանը:

Չորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանման համագործակցությունը զորակոչվածների ու

նրանց ծնողների հետ, ինչպես հավաստիացնում է ստորաբաժանման ղեկավարը, շարունակական է լինելու տղաների ծառայության ամբողջ ընթացքում:

Մեկ ամիս առաջ մեկնարկած ամառային զորակոչի հերթական արարողությունը սկսել էր առավոտվանից՝ բժշկական հանձնաժողովի աշխատանքով: Հանձնաժողովը զորակոչիկներին հանրապետության կենտրոնական հավաքակայան ճանապարհելուց առաջ ևս մեկ անգամ մարմնազննում, ջերմաչափում էր, իրականացնում փաստաթղթերի վերջնական ստուգում:

– *Նախապես զորակոչիկները բժշկական հանձնաժողովից ստուգումներ են անցել, և ովքեր ունեցել են զանգատներ կամ որոնց մոտ բուժզննման ընթացքում խնդիրներ են ի* **Շարունակությունը՝ էջ 5**

2021 թ մայիսի 12-ից սկսված Սև լճի տարածքից հուլիսի 14-ին երկու հայ զինվորական է անհետացել՝ Արթուր Նալբանդյան և Արամայիս Տոռոզյան:
Իսկ այդ ընթացքում Ալիևը հայտարարել է, որ Ադրբեջանի զինված ուժերը չեն լքի Հայաստանի տարածքը: «Ես համարում եմ, որ դա Չանգեզուրի տարածքն է, իսկ Չանգեզուրը «մեր նախնիների հողն է», և մենք մեր հողի վրա ենք», – ասել է նա՝ ադրբեջանական հեռուստաընկերությանը տված հարցազրույցում:
Նրա խոսքով՝ այդ հարցը քննարկվել է նաև ԵՍ նախագահ Շառլ Միշելի՝ Բաքու կատարած այցի ժամանակ: «Ես նրան փորձել եմ բացատրել, որ մենք դուրս ենք եկել մեր սահմաններ: Ինչո՞ւ միայն մայիսին, քանի որ ձյունը հալվեց: Դրանից հետո մենք վերցրինք անհրաժեշտ բարձունքները, տեղավորվեցինք դրանց վրա, ամրակապվեցինք այնտեղ և կամրակապվեցինք», – ընդգծել է Ալիևը:

Մշտադիտարկման այցեր Սյունիքի մարզի նախակրթարաններ

ՀՀ Սյունիքի մարզի երեք ուսումնական հաստատությունների հենքի վրա 2017 և 2019 թթ. ընթացքում «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակում դրամաշնորհային միջոցներով հիմնվել են նոր նախակրթարաններ:

ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի «Պարոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաբաղադրիչի շրջանակում գրասենյակի ներկայացուցիչները մշտադիտարկման նպատակով այցելել են ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի թիվ 3 մանկապարտեզ, Ախլաթյանի միջնակարգ և Իշխանասարի հիմնական դպրոցներ, որոնցում իրականացվել են նախադպրոցական միկրոծրագրեր: Բոլոր նախակրթարանները գործում են 5-օրյա աշխատանքային ռեժիմով: Դասերը սկսվում են 9.00-ին և ավարտվում 13.00-ին:

ԾԻԳ-ի ներկայացուցիչները ծանոթացել են կատարված աշխատանքներին, երեխաների կրթության և դաստիարակության համար ստեղծված պայմաններին, գրուցել դաստիարակների ու երեխաների հետ: Դաստիարակները փաստել են, որ դպրոցներն ապահովում են բոլոր անհրաժեշտ պայմաններն ու միջոցները ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար, իսկ երեխաներն ակտիվորեն մասնակցում են դասադրոցներին:

Նշենք, որ բոլոր նախակրթարանները դրամաշնորհային ծրագրերի շրջանակում կահավորվել են ժամանակակից գույքով ու սարքավորումներով, ինչպես նաև ապահովվել են ուսումնական և ուսուցողական նյութերով ու խաղալիքներով: Նախակրթարաններում դաստիարակի աշխատանքներն իրականացնում են ծրագրի շրջանակում վերապատրաստված դաստիարակները: Հաստատություններում պահպանվում են ՀՀ առողջապահության նախարարության հաստատած սանիտարահիգիենիկ պահանջները: Հավելենք, որ նախակրթարաններն ունեն հարմարեցված պայմաններ, և դրանցում կրթություն են ստանում նաև սահմանափակ հնարավորություններով երեխաներ:

15.07.2021

Արցախցիներին կացարան տրամադրած քաղաքացիներն աջակցություն կստանան

Կառավարությունն ընդունեց «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Սյունիքի մարզում ժամանակավորապես տեղավորված Արցախի Հանրապետության քաղաքացիներին կացարան տրամադրած տնտեսավարողներին աջակցություն տրամադրելու մասին» որոշում: Ինչպես փոխանցում է «Արմենպրես»-ը, նախագծի համաձայն՝ Արցախցիների սանձազերծած պատերազմի հետևանքով Սյունիքի մարզում Արցախի Հանրապետության քաղաքացիներին ժամանակավոր կացարաններ տրամադրած տնտեսավարողներին դրամաշնորհի տեսքով տրամադրել աջակցություն՝ վերջիններիս կողմից կացարանների տրամադրման արդյունքում կատարված ծախսերի և կրած վնասների մասնակի փոխհատուցման նպատակով:

Միջոցառման շահառու հանդիսանում են, մասնավորապես, այն հանգստյան տները, հյուրանոցները և հյուրատները, որոնք ընդգրկված են եղել կոմունալ ծառայությունների փոխհատուցման ծրագրի շահառուների ցանկում:

15.07.2021

Սուրեն Պապիկյանը ներկայացրել է Մեղրի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արարատ Թումանյանին

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի պաշտոնակատար Սուրեն Պապիկյանը մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի հետ Մեղրու համայնքապետարանի աշխատակազմին, համայնքի ավագանու անդամներին, բազմաբնակավայր համայնքի կազմում գտնվող բնակավայրերի վարչական ղեկավարներին և ներկայացրել է Մեղրի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արարատ Թումանյանին:



Սուրեն Պապիկյանը հաջողություն է մատչել Արարատ Թումանյանին իրեն վերապահված գործառնություններն իրականացնելու գործում կարևորելով համայնքի առջև ծառայած խնդիրների արդյունավետ լուծումը: 16.07.2021

ՆԵՐՍԵՍ ՀԱՂՈՒՆՑ. «Տեղ համայնքը 60 կմ շփման գիծ ունի Ադրբեջանի հետ, իսկ մոտ 350 հա հողատարածք հայտնվել է հակառակորդի տիրապետության ներքո»



2020 թ Նոյեմբերի 9-ի հայտնի հայտարարությունից և մասնավորապես դեկտեմբերի 18-ից հետո Տեղ խոշորացված համայնքը՝ իր մեջ գտնվող գյուղերով, հայտնվել է սահմանապահ համայնքի կարգավիճակում:

Համայնքը, բացի Տեղից, ներառում է Կորնիձոր, Զարաշեն, Արավուս, Վաղատուր, Խոզնավար, Խնածախ գյուղերը:

Գրեթե ամեն օր համայնքի տարբեր բնակավայրերից մտահոգիչ տեղեկություններ են ստանում: Տարածված տեղեկությունները ճշտելու և իրական վիճակին ծանոթանալու համար հուլիսի 26-

ին այցելեցինք Տեղ համայնք՝ գրուցելու համայնքի ղեկավար Ներսես Հաղոնցի հետ:

Պարոն Հաղոնց, առաջին հարցը, որը կցանկանալիք ձեզ ուղղել՝ հետևյալն է՝ մոտ մեկ ամիս առաջ՝ հունիսի 20-ին,

տեղի ունեցավ խորհրդարանական արտահերթ ընտրություն, որից հետո, ինչպես տեսնում եք, Սյունիքի մարզում տեղի են ունենում մի շարք ոչ սովորական, նույնիսկ արտառոց գործընթացներ, սակայն այսօր մտադիր չենք Ձեզ հետ քննարկել այդ իրավիճակը, քանի որ դա խոսակցության առանձին նյութ է, պարզապես կցանկանալիք իմանալ՝ ինչպիսի՞ն է հետընտրական իրավիճակը Տեղ համայնքում՝ քաղաքացիական համերաշխության, մարդկանց տրամադրության տեսակետից:

– Հնորիսկալ եմ գրույցը նախաձեռնելու համար: Ասեմ, որ հետընտրական գործընթացները Տեղ համայնքի բոլոր բնակավայրերում ավարտվել են հունիսի 20-ի հաջորդ օրը. բնակիչներն անցել են իրենց բնական կյանքին, յուրաքանչյուրը զբաղված է իր տնտեսությամբ, արտառոց դեպքեր չեն եղել, ապրում ենք մեր կյանքով:

– Հիմա՝ օպերատիվ իրավիճակի մասին. դեկտեմբերի 18-ից հետո ամբողջ համայնքը սահմանապահի կարգավիճակում է, հետաքրքիր է՝ քանի՞ կիլոմետր է կազմում համայնքի սահմանը կամ շփման գիծը Ադրբեջանի հետ՝ Խոզնավարից մինչև Կորնիձոր:

– Տեղ խոշորացված համայնքն իր մեջ ներառում է յոթ բնակավայր. Կորնիձորից մինչև Խոզնավարի վարչական շրջանի հատվածը 60 կմ երկարությամբ սահմանագիծ է, որը պաշտպանվում է ՀՀ ՉՈՒ բանակային կորպուսի կողմից. մենք ևս համագործակցում ենք նրանց հետ, եթե հանձնարարություններ լինում են:

– Լաչինի վարչական շրջանի՞ հետ է սահմանն անցնում, թե՞ նաև Զեյթաշար-Շարունակությունը՝ էլ 7

Խմելու ջուրը կհասնի Խնածախ. ներդրվել է 84 միլիոն 960 հազար դրամ

Սյունիքի մարզի Տեղ միավորված համայնքի՝ Խնածախ բնակավայրը տարիներ շարունակ գրկված է խմելու ջրից:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով իրականացվող՝ Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրով մեկնարկել են ջրագծերի մոնտաժման աշխատանքները:

ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի և չորս տոկոսի չափով նաև համայնքի համաֆինասավորմամբ՝ Խնածախի բոլոր տները կապահովվեն շուրջօրյա ջրամատակարարմամբ: Հաճառու բնակիչների թիվը 800 է: Համայնքը կենտրոն հեղուկով ապահովելու համար նախագծվել է չորս ջրահավաք կառույց, կմոնտաժվեն նաև անհրաժեշտ բնակություններ խողովակաշարեր: Ընդհանուր ներդրումը կազմում է 84 միլիոն 960 հազար դրամ: Աշխատանքների ավարտը նախատես-

վում է 2022 թվականի փետրվարին:

Խնածախ բնակավայրը խմելու ջրի ինքնահոս համակարգ երբևէ չի ունեցել, ջրի խնդիրը տարեցտարի ավելի է սրվել, այժմ բնակիչները ջուր ստանում են երեք օրը մեկ, այն էլ ոչ անհրաժեշտ քանակությամբ, իսկ ջուրը բնակավայրից հեռու հատվածից տուն հասցնելը լրացուցիչ բեռ է՝ վերջիններիս համար համար: Ըստ Տեղի համայնքապետարանի՝ ջրի խնդրի լուծումը մեծապես կկանխի համայնքից արտագաղթը, 2008 թվականից ի վեր Խնածախը լքել է 300 բնակիչ, պատճառներից մեկը հենց ջրի բացակայությունն է:

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, 27.07.2021

Շինարարական ակտիվ եռուզեռ՝ Կապանում

Կապան համայնքը այս օրերին վերածվել է ակտիվ շինարարական, որտեղ մի քանի ուղղություններով ընթանում են հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներ:

Րամայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը ամենօրյա և անմիջական հսկողության տակ է պահում կատարվող աշխատանքների ընթացքը և վերահսկում դրանց որակյալ կատարման ապահովումը:

Ներքոնշյալ բոլոր աշխատանքներն իրականացվում են համայնքի բյուջեի միջոցներով:

Փողոցների պատշաճ մակարդակը պահպանելու և վարորդներին հնարավոր անհարմարություններից ձերբազատելու նպատակով քաղաքի կենտրոնական և երկրորդական փողոցներում իրականացվել են ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգման աշխատանքներ: Նշյալ շինաշխատանքները ընդգրկել են համայնքի՝ առավել անմիջապես փնտրվող գոտիներում Երկաթուղայինների, Շահումյան (կայարանամերձ և աջափնյակ հատված), Ս. Մելիք-Ստեփանյան, Գ.Նժդեհ, Թումանյան, Ա.Մանուկյան, Գր.Արզումանյան, Ռ.Մինասյան, Լեռնագործների փողոցները, Դավիթ Բեկ թաղամասը և դեպի Զայիժոր թաղամասի կամուրջը տանող ճանապարհահատվածը:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **7 906 860 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ԿԱՊԱՆԻ ՏՇՇ» ՍՊԸ:**

Ասֆալտման և սալիկապատման աշխատանքներ են իրականացվում Ս.Ստեփանյան 20 և Գ.Նժդեհ 12 շենքերի բակային տարածքներում:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **11 792 868 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ԿԱՊԱՆԻ ՏՇՇ» ՍՊԸ:**

Երկրորդ շնչառություն է ստանում Ս. Պապյան 18 շենքի բակային հատվածը, որտեղ նախատեսվում է իրականացնել սալիկապատման, նստարանների տեղադրման, խաղահրապարակի կառուցման, ինչպես նաև ծառատնկման աշխատանքներ:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **13 534 066 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ԿԱՍՈՒՆ» ՍՊԸ:**

Բարեկարգման հաջորդ հասցեն Ա. Մանուկյան, Շահումյան, Զ.Ավետիսյան, Սպանդարյան փողոցների հատման կամուրջի (կենտրոնական) մայթերն են: Այստեղ ևս նախատեսվում է սալիկապատման, եզրաքարերը, բազրիքները և լուսատուները նորոգել փոխարինման աշխատանքներ:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **24 800 000 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ԿԱՊԱՆԻ ՆՈՐՈՉԵՒՆ» ՍՊԸ:**

Ա.Մանուկյան 1-ին նրբանցքի թիվ 1/2 հասցեում նախատեսվում է հիմնել նոր մարտարվեստի դպրոց, որի շինարարական աշխատանքները կենկարկեն մոտ ժամանակներում:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **31 703 970 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ԼԻԱՇԻՆ» ՍՊԸ:**

Բարեկարգման մյուս հասցեն Վահանավանքի թաղամասն է, որտեղ՝ վանքի հարևանությամբ կկառուցվի 4 տաղավար, ինչն էլ իր հերթին կբարելավի բնակչության ազատ ժամանցի և հանգստի կազմակերպման որակը:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ մոտ **21 000 000 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ԱՐԸ-ԱՐԱ» ՍՊԸ:**

Մտալկա ժամանակներում իրականացվող աշխատանքներից է նաև Ս.Ստեփանյան փողոցի թիվ 8 շենքի տանիքի նորոգման և

Շահումյան փողոցի թիվ 2 շենքի հարևանությամբ տեղադրվող կանգառի աշխատանքները:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **6 306 000 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ԲԻՆԴԵՐՍ» ՍՊԸ:**

Կապանի համայնքապետարանի կողմից ներկայացված 2020 թվականի սուբվենցիոն ծրագրերից անմասն չեն մնացել գյուղական բնակավայրերը:

Ծրագրի շրջանակներում Ագարակ և Եղվարդ բնակավայրերում կառուցվում է խմելու ջրի նոր ջրագիծ, ինչի արդյունքում 2 սահմանամերձ գյուղ ամբողջությամբ կապահովվի խմելու ջրով: Այսինքն՝ ծրագրի իրականացումը կբարելավի Ագարակ բնակավայրի 160 և Եղվարդ բնակավայրի 300 բնակիչների կենցաղային պայմանները, բնակիչներին ջուր կմատակարարվի ոչ թե շաբաթը մեկ անգամ, այլ ամեն օր՝ և տարիներ շարունակ անլուծելի թվացող խնդիրը վերջնականապես կհանգուցալուծվի:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **201 894 610 ՀՀ դրամ:**

■ ՀՀ Կառավարության ներդրումը՝ 70% կամ **141 326 227 ՀՀ դրամ:**

■ Կապան համայնքի ներդրումը՝ 30% կամ **60 568 227 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ՇԻՆ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ:**

Սուբվենցիայի մեկ այլ ծրագրով հիմնանորոգվում է սահմանամերձ Դավիթ Բեկ բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատության շենքը, որից հետո նախատեսվում է ավելի մեծ թվով երեխաների հաճախելիություն: ՆՈՒՅ-ում ստեղծվելու են երեխաների համար բոլոր անհրաժեշտ պայմանները՝ օրը բովանդակալից և հագեցած անցկացնելու համար:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **23 719 560 ՀՀ դրամ:**

■ ՀՀ Կառավարության ներդրումը՝ 65% կամ **15 417 714 ՀՀ դրամ:**

■ Կապան համայնքի ներդրումը՝ 35% կամ **8 301 846 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ՎԻԿԱՐՏ» ՍՊԸ:**

Յուրաքանչյուր երեխային նախադպրոցական կրթությունը հասանելի դարձնելու համար այլընտրանքային ՆՈՒՅ-ի հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվում նաև Վարդավանք բնակավայրում, որտեղ նորոգվում է հետո հաճախելու է 12 երեխա:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **19 426 068 ՀՀ դրամ:**

■ ՀՀ Կառավարության ներդրումը՝ 65% կամ **12 626 944 ՀՀ դրամ:**

■ Կապան համայնքի ներդրումը՝ 35% կամ **6 799 123 ՀՀ դրամ:**

■ Շինարարական կազմակերպությունը՝ **«ՎԻԿԱՐՏ» ՍՊԸ:**

Ձորք թաղամասի ակումբ-գրադարանը վերածվելու է նոր՝ ժամանակակից լուծումներով ակումբ-գրադարանի և երիտասարդների համար լինելու է ոչ միայն պարզապես գիրք ընթերցելու, այլ նաև տարբեր միջոցառումներ անցկացնելու լավագույն վայր:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **95 010 288 ՀՀ դրամ:**

■ ՀՀ Կառավարության ներդրումը՝ 45% կամ **42 754 629 դրամ:**

■ Կապան համայնքի ներդրումը՝ 55% կամ **52 255 658 դրամ:**

Ավարտական փուլում են գտնվում Կապանի արվեստի թանգարանի շենքի հիմնանորոգման աշխատանքները: Թանգարանն իր տեսակով միակն է համայնքում և կապիտալ նորոգումից հետո այն ավելի գրավիչ կդառնա ոչ միայն կապանցիների, այլև զբոսաշրջիկների համար՝ ապահովելով մեծ



թվով այցելուների հոսք:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **88 736 820 ՀՀ դրամ:**

■ ՀՀ Կառավարության ներդրումը՝ 45% կամ **39 931 569 դրամ:**

■ Կապան համայնքի ներդրումը՝ 55% կամ **48 805 251 դրամ:**

Ավարտին են մոտենում Կապանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման առանձնացված ստորաբաժանման շենքի հիմնանորոգման աշխատանքները:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **73 349 280 ՀՀ դրամ:**

■ ՀՀ Կառավարության ներդրումը՝ 45% կամ **33 007 176 դրամ:**

■ Կապան համայնքի ներդրումը՝ 55% կամ **40 342 104 դրամ:**

Իսկ Շահումյան փողոցում... Մայթերն

ամբողջովին սալիկապատվել են, հին եզրաքարերը փոխարինվել նորերով, ապամոնտաժվել են հին աղբամանները, տեղադրվել նորերը, մայթերի ծառերի մի մասը հատվել է և փոխարինվելու է նորերով՝ պենսիլվանյան /գանգրասաղարթ/ հացենու տնկիներով: Լուսավորության հին սյուները ևս ապամոնտաժվել են՝ կանգնեցվել նոր՝ երկկողմանի լուսավորության համար նախատեսված սյուներ:

■ Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ **114 021 517 ՀՀ դրամ:**

■ ՀՀ Կառավարության ներդրումը՝ 60% կամ **68 412 910 դրամ:**

■ Կապան համայնքի ներդրումը՝ 40% կամ **45 608 606 դրամ:**

||

«Ապառաժ»-ի մնայուն գործերը. Մ-2 մայրուղու Արծվանիկ-Կարմրաքար հատվածը՝ բարձրակարգ ճանապարհ

«Ապառաժ» ՍՊ ընկերության ճանապարհաշինարարներին այցելել էինք Նախորդ տարվա օգոստոսին, երբ Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրան պետական սահման միջպետական նշանակության կմ 284 (+400) - 289 (+100) հատվածում հիմնանորոգման աշխատանքներ էին կատարվում: Ընթերցողին ըն-

ու ամուր լինի, եթե կողակը թույլ լինի, ճանապարհը շուտ է քանդվում», – մանրամասնում է Տիգրան Սարգսյանը: Մեր գրուցակցի փոխանցմամբ՝ ի վերջո Արծվանիկ-Կարմրաքարը կլինի հինգերորդ կարգի ճանապարհ: Երբ երթևեկում էինք Տիգրանի ավտոմեքենայով, նա անընդհատ հեռախոսազանգեր էր ստանում և պատասխանում:



«Նորոգչին»-ը հիմնանորոգում է Մ-2 մայրուղու Կապան-Քաջարան ճանապարհահատվածը

Մարզի ճանապարհների հիմնանորոգման հաջորդ հասցեն, որտեղ եղավ «Սյունյաց երկիր» ստեղծագործական խումբը, Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության մայրուղու Կապան-Քաջարան ճանապարհահատվածն էր: Այստեղ միջին նորոգման աշխատանքներ է կատարում «Նորոգչին» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Ռազմիկ Փարսյան):

Հուլիսի 14-ին այցելեցինք «Նորոգչին»-ի ճանապարհաշինարարներին, որոնց հանդիպեցինք կոմբինատի Նախկին պոչմարտի հարևանությամբ: Ինչպես տեղեկացրեց ընկերության աշխույժ Արարատ Սահակյանը, «Նորոգչին»-ը միջին նորոգումներ է իրականացնում Մ-2 միջպետական նշանակության ճանապարհի կմ 317+300 - կմ 329-820 հատվածում, որ ընդգրկում է Նախկին Քաջարանի հանքաշինական մասնագիտացված վարչության ավտոհավաքակայանից մինչև Քաջարան քաղաքի կամուրջը, որով ճանապարհը թեքվում է դեպի Մեղրի:

Ճանապարհաշինարարների մեջ հանդիպեցինք տարածքային կառավարման և ենթակառուցվածքների Նախարարության առընթեր «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի տեխնիկ Քարոս Կիլիչյանին, ով Նախ տեղեկացրեց, որ ճանապարհների միջին նորոգման տեխնիկական

հսկողությունն իրենց կազմակերպության գործառնություններից է և այս պահի դրությամբ շեղումներ չեն կատարվել:

Մեր այցելության ժամին «Նորոգչին»-ի ճանապարհաշինարարները ճանապարհածակի ֆրեզում էին իրականացնում, որ ներառում է հին ճանապարհածակի 5 սմ-անոց շերտի քանդում և հեռացում: Մինչ այդ կողակները մաքրել են թփերից և ջրաբերուկներից, որից հետո դրանց վրա պիտի տեղադրվի 5-8 սմ հաստությամբ ավազակույծային շերտ: Նաև անհրաժեշտ փոսային աշխատանքներ են կատարել՝ երեք սմ հաստությամբ հարթեցնող շերտ տեղադրելու համար, որից հետո կտեղադրվի հինգ սմ հաստությամբ վերին շերտը:

Ինչպես «Սյունյաց երկիր» փոխանցեց «Նորոգչին» ՍՊ ընկերության տնօրեն Ռազմիկ Փարսյանը, իրականացվող աշխատանքների Նախագծային արժեքը 909 մլն դրամ է: Հիմնական աշխատանքները մեկնարկել են հունիսի 9-ին, շինարարության ավարտ է սահմանված նոյեմբերի 25-ը:

Թեև աշխատանքների ավարտին դեռ շատ ժամանակ կա, բայց վստահաբար կարելի է ասել՝ Քաջարան-Կապան ավտոմայրուղին բարձրակարգ վիճակ է ունենալու, քանզի գործը վստահված է մեծահամբավ ու վաստակաբեռ «Նորոգչին» ընկերությանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

կալելի լինելու համար ասենք, որ դա Արծվանիկ-Կարմրաքար 4.7 կմ-անոց հատվածն է: Ճանապարհի վերակառուցման Նախագիծն իրականացրել է «Մայրուղի» ՍՊ ընկերությունը:

Չերթական մեր այցելությունը «Ապառաժ»-ի ճանապարհաշինարարներին հուլիսի 13-ին էր: Ընկերության տեղամասի պետ Տիգրան Սարգսյանը, ով արդեն 10 տարի ճանապարհաշինության ոլորտում է, ի սկզբանե տեղեկացրեց, որ Նախորդ տարում հիշյալ հատվածում իրականացրել են հողային աշխատանքներ, ջրահեռացումը, փոսային նորոգումներ կատարել, մաքրել ջրօղիչները, ճանապարհի ներքին շերտը մշակել սառը վերամշակման եղանակով: Բացի այդ՝ մինչև մեկ մետր խորությամբ փոսային նորոգումներ են արվել: Բայց 44-օրյա պատերազմը խառնեց բոլոր խտաբարտերը. «Չէինք կարող ճանապարհը փակել ու նորմալ աշխատել: Խիճ էինք փռում, բայց ավտոմեքենաների երթևեկը խանգարում էր, չէինք կարողանում դեմն առնել, մտնում էին ասֆալտը փչացնում»: Ի դեպ, հիմնանորոգմանը զուգահեռ՝ այս օրերին «Ապառաժ»-ի ճանապարհաշինարարները Շուռնուխի հատվածում ավարտել են պատերազմի պատճառով կիսատ մնացած 1.5 կմ ճանապարհահատվածի հիմնանորոգումը:

Ճանապարհահատվածի տարբեր տեղերից շինարարները զանգում էին, նա էլ անհրաժեշտ հրահանգներ ու ցուցումներ էր տալիս: Այդ ամենից էլ երևում էր, որ, իրոք, աշխատանքներն ավարտական փուլում են:

Այդ ամենը ոգևորիչ է: Մի փաստ էլ լրատվամիջոցները տեղեկացրին: Ինչպես Գյումրիում հայտնեց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների Նախարար Սուրեն Պապիկյանը, Եվրամիությունը ցանկություն է հայտնել ֆինանսավորել Հյուսիս-հարավ ճանապարհի հարավային ուղղության շինարարությունը. «*Խոսքը շուրջ 600 մլն եվրոյի մասին է, և քանի որ արդեն առկա են Նախահաշվային փաստաթղթեր, ապա ամեն ինչ պետք է անել, որ օգոստոսին մրցույթ հայտարարենք: 1.25 մլրդ դոլար կարծես միայն թունելների հատվածը մինչև Քաջարան, 250 մլն դոլար՝ մինչև Ագարակ*»:

Այս փաստին Տիգրան Սարգսյանը հավելեց, որ իրենց ընկերությունը մասնագիտացված է թունելաշինության մեջ: Քաջարան-Մեղրի հատվածում թունելներ են Նախատեսված. «*Որտեղ թունել եղավ, հաստատ գործն «Ապառաժ» է իրականացնելու*», – համոզված է նա ու նաև հավելում է,

որ չորս թունել է՝ Նախատեսված, որից մեկը բավականին երկար է, մոտ 13 կմ. Սիսիանից մտնում Գեղիով դուրս է գալիս:

Մի հուսադրող փաստ էլ հաղորդեց մեր գրուցակիցը. Արծվանիկ-Կարմրաքար ճանապարհահատվածի վերակառուցմանը զուգահեռ՝ «Ապառաժ» ընկերության շինարարներն իրականացնում են Կարդավանք-Ագարակ 13,1 կմ երկարությամբ ճանապարհի վերակառուցումը՝ վեց մետր լայնությամբ: Պատերազմից հետո երեք գյուղեր՝ Ագարակ,

Եղվարդ, Ուծանիս, զրկվել են ասֆալտապատ ճանապարհից՝ մնացել Կարդավանք-Ագարակ հողածածկ ճանապարհի հույսին: Լավ է, որ այս խնդրում թունելի վերջում լույս է նշմարվում... Այնպես այդ երեք գյուղը հայտնվել էին ճանապարհային շրջափակման մեջ:

Արդեն հինգ կմ հատվածի վրա հողային աշխատանքներ են կատարվել: Ընկերության ծանր տեխնիկան այժմ այդ հատվածում է աշխատում: Կապան-Արծվանիկ ճանապարհից տեսանելի է դեպի Կարդավանք տանող հող թարմ ճանապարհը:

Տիգրան Սարգսյանի փոխանցմամբ՝ այդտեղ շատ գործ կա անելու, քանզի ճանապարհը տարիներով չի շահագործվել:

Կապան վերադառնալիս մտանք Նախկին երկաթբետոնյա կառուցվածքների գործարան, որի տարածքում գործում է «Ապառաժ»-ի գերմանական արտադրության ասֆալտի գործարանը՝ ժամում 90 տ արտադրողականությամբ: Դրան կից տեղադրված է քար ջարդող և մանրացնող սարքավորումը (дробилка), որն իր պարամետրերով մարզում հավասարը չունի: Հետո հիշեցի, երբ տեղամասի պետն ասաց, թե իրենք ոչ թե գետի ավազ են օգտագործում, այլ քարից են ավազ ստանում: Ասել է թե՛ ընկերությունը հումքի խնդիր չունի, ինչը շատ կարևոր պայման է ճանապարհի հիմնանորոգումը Նախատեսված ժամկետում և որակով ավարտելու համար:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ



Ինչևէ, այս տարի մայիսից սկսվել է Արծվանիկ – Կարմրաքար ճանապարհահատվածի հիմնանորոգումը: Ճանապարհի երթևեկելի մասի լայնությունը 6.6 մ է, որը տեղերում 8.1 մ, կողակների լայնությունը՝ 1.8 մ: Հիմնարարության ավարտ է սահմանված հուլիսի 30-ը: Տիգրան Սարգսյանի փոխանցմամբ՝ մտում է նշագծումներ անել և ազդանշանային սյուները տեղադրել, իսկ այս օրերին կողակներն են ամրացնում, խտացնում և ճանապարհի հատվող ուղիների մուտքերն ասֆալտում: Իսկ ընդհանրապես որոշ թերություններ նկատվում էին Նախագծի մեջ, ինչն աշխատանքի ընթացքում սրբագրվել են: Բացի բուն ճանապարհից՝ կան նաև օժանդակ կառույցներ՝ կամրջակներ, մի տեղ էլ կողակի լայնությունը չի հերիքել, «գաբիոն» են կառուցել (քարե պատնեշ)՝ 90 խորանարդ մետր քարե լիցքով: «*Կողակը շատ կարևոր է ճանապարհաշինության մեջ, որ շատ խիտ*



ՀՀ ԿԳՄՍ Նախարարի տեղակալ Արա Խզմայանն աշխատանքային այցով Սյունիքում էր

Այս շրջանակում Նախարարի տեղակալը հանդիպել է Ակսեյ Բակունցի տուն-թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանի և Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Շանթ Զովինսկիայանի հետ: Տնօրենները ներկայացրել են իրենց ղեկավարած մշակութային կառույցների հիմնական խնդիրները՝ ինչպես համավարակի սահմանափակումներով և դրա հետևանքներով պայմանավորված, այնպես էլ գույքային և տեխնիկական խնդիրների տեսանկյունից:

Հանդիպման կարևոր բնարկումներից էին նաև ԿԳՄՍ-ի սահմանած առաջնահերթությունները, որոնց համաձայն՝ սահմանափակումները համայնքները պետք է առանձնանան մշակութային ակտիվ կյանքով, ինչի նպատակով էլ Նախարարությունը պետական աջակցության դրամաշնորհներն առաջնահերթ տրամադրում է այն նախագծերին, որոնք մասամբ կամ ամբողջությամբ իրականացվում են սահմանափակումներով: Այդ համատեքստում ընդգծվել է «Թիկունք» մշակույթ, սահմանը՝ կենտրոն» ծրագրի շրջանակում «Հայաստանի փոքրիկ երգիչներ»

մանկական ֆիլիարմոնիայի հյուրախաղերը Սյունիքում և Արցախում, ինչը դրական մեծ արձագանք է գտել սահմանափակումների բնակիչների կողմից:

Չորրորդ ընթացքում անդրադարձ է կատարվել Գորիսի Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոն մայրաքաղաքի երիտասարդ ռեժիսորների գործուղման հարցին՝ նոր բեմադրություններ իրականացնելու նպատակով: Այնուհետև քննարկվել են թատրոնի փոքր դահլիճի վերագինման, այդ թվում՝ նաև լուսանկարային տեխնիկայի ձեռքբերման հարցերը: Լշեթ, որ թատրոնի փոքր դահլիճը հիմնականում ծառայում է մանկապատանեկան ներկայացումների և միջոցառումների համար, որոնք նպաստում են երեխաների ներգրավվածությանը մշակութային կյանքին և գեղագիտական կրթությանը:

Հիշեցնենք, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ Կամերային երաժշտության ազգային կենտրոնն Էդվարդ Միրզոյանի և Առնո Բաբաջանյանի 100-ամյակներին նվիրված՝ հուլիսի 27-28-ին համերգներով

Երկու մեծանուն կոմպոզիտորներին նվիրված հոբելյանական համերգները սկսվեցին Կապանից

Երկրորդ համերգային շրջագայությամբ Սյունիքի մարզում էր Հայաստանի պետական կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար էլ գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյան): Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Կամերային երաժշտության ազգային կենտրոնը նախաձեռնել են համերգաշար՝ նվիրված հայ երգարվեստի երկու նվիրյալներին՝ կոմպոզիտորներ Առնո Բաբաջանյանի և Էդուարդ Միրզոյանի հարյուրամյա հոբելյաններին:

Անդրանիկ համերգը տեղի ունեցավ Կապանի մշակույթի կենտրոնում, որտեղ հանդիպեցին ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, նվագախմբի դիրիժոր Ռոբերտ Մլեյանին: Նա «Սյունյաց երկիր» հետ զրույցում լշեց, որ առաջին անգամ է Կապանում, տպավորված է բնութագրով, իսկ հանդիսականին կհանդիպի դահլիճում:

Ամսօրյան մթնոլորտ էր դահլիճում, բարեմաղանքի խոսքեր հղեց հանրապետության ԿԳՄ Ֆոնսնախարար Արա Խզմայանը. «Շատ ուրախ եմ, որ երկու կոմպոզիտորների հոբելյանների շրջանը սկսվում է Կապանից, ուզում եմ նաև բոլորիդ շնորհավորել Կապանը երիտասարդական մայրաքաղաք հռչակվելու առիթով: Անցող երկու տարին մեզ համար փորձությունների ժամանակաշրջան էր, կորուստների համավարակը, պատերազմը ծանր բարդացրեք նաև հետևանքներ ունեցան բոլորիս վրա, և հանրային տրամադրությունները կարգավորելու, մարդկանց մեջ լավատեսության առաջացման են միտված նման համերգաշարերը: Մասնավորապես մեկը նվիրված է երկու մեծանուն հայի, ովքեր հպարտությունից, արժանապատվությամբ



յան զգացումից, հիացմունքից զատ ուրիշ մի այլ զգացում չեն առաջացնում: Մտում է ավելացնել, որ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ջանք չի խնայի, որ հանդիսականի հետ նման հանդիպումները լինեն շարունակական»:

Համերգի մեկնարկին հնչեցին Էդուարդ Միրզոյանի ստեղծագործությունների՝ հատված լարային քառյակից, որն առաջին դրամատիկական բնույթի նշանակալի գործն է մեր ազգային կամերալ երաժշտության մեջ, հետո հնչեց կինոերաժշտություն «Քառս» ֆիլմից: Այնուհետև կամերային նվագախմբին միացավ Վահան Հայրապետյանի ջազ տրիոն՝ Մակար Նովիկով (կոնտրաբաս), Արման Մնացականյան (հարվածային գործիքներ), Վահան Հայրապետյան (դաշնամուր, վոկալ): Հնչեցին Բաբաջանյանի երգերը՝ Վահան Հայրապետյանի մշակումներով՝ «Առաջին սիրո երգը», «Տղերքը, որոնք չկան», «Մեղեդի», «Вери мне музыку», «Ах, тополиный пух», «Իմ երեան», Մավր Սկրտչյանի (բարիտոն), Սոֆյա Սայադյանի (սոպրանո) կատարմամբ:

Հավարտ համերգի հնչեց Ա. Բաբաջանյանի «Էքսպրոմտը»:

Նույն համերգը հուլիսի 28-ին տեղի ունեցավ Գորիսի դրամատիկական թատրոնի դահլիճում:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

Հայոց ազգային բանակ մեկնեց կապանցի, գորիսեցի և սիսիանցի գորակոչիկների հերթական խումբը

Սկզբը՝ էջ 1
 հայտ եկել, ուղարկել ենք համապատասխան հետազոտման, – տեղեկացնում է Վահե Աղալարյանը: – Բայց հնարավոր է՝ վերջին օրերին ինչ-ինչ առողջական խնդիրներ են ծագել. այսօր այդ հարցերն են պարզում, քանի դեռ նրանք մեզ մոտ են:

Բժշկական հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո գորակոչիկները պատրաստ էին մեկնելու...

...Վաղ առավոտվանից Գորիսի զինկոմիսարիատի մերձակայքում հավաքվել էին հարյուրավոր մարդիկ՝ զինվորական ծառայության մեկնողների հարազատներ, մերձավորներ, ընկերներ: Չնայած հանդիսավոր արարողություն չկար, ինչպես ձմեռային գորակոչի ժամանակ էր (երբ ներկա էին մարզի և համայնքների իշխանավորները, Սյունյաց թեմի հոգևոր դասի ներկայացուցիչները), բայց տեսարանը (հիրավի) փառաբանելի էր...

Հաճելի էր տեսնել հատկապես ծառայության մեկնող տղաների բարձր տրամադրու-

յունը, ոգևորությունը: Անշուշտ, հասկանալի էր նաև ծնողների, մերձավորների հուզմունքը, որը, կարծում ենք, ավելի շատ հպարտության յուրօրինակ դրսևորում էր:

Հպարտության մի նոր զգացում ունեցանք հրաժեշտի պահին. մի տեղ տոնական իրավիճակին բնորոշ «Շամայան» էին բացում, մեկ այլ տեղ գորակոչիկին օդ էին թռցնում ընկերները: Եվ, իհարկե, ողջագուրանքներ, ողջերթի ու բարի ծառայության մաղթանքներ, սիրած տղաներին բանակ ճանապարհող պարմանուհիներ՝ արցունքոտ աչքերով... Իսկ վերջում... Հարյուրավորների որոտընդոտ ծափահարությունների ներքո մեքենաները շարժվեցին մայրաքաղաք... Երևանում՝ կենտրոնական հավաքականում կորոշվի, թե ով որտեղ է ծառայելու: Առաջմ մի բան է հայտնի՝ նրանք Արցախի Հանրապետությունում չեն ծառայելու, թեև հարց է (դատելով ծնողների գրույցներից)՝ ինչամիտ է այդ որոշումը, թե՞ ոչ:

Ինչևէ, տեսարանն իրոք տրամադրող ու ոգևորիչ էր... Ի՞նչ տղաներ ունենք, առյուծա-

հանդես կզա Կապանում և Գորիսում: Հայաստանի պետական կամերային նվագախումբը ելույթ կունենա գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյանի ղեկավարությամբ: Համերգներին մասնակցելու են «Վահան Հայրապետյան» տրիոն (Վահան Հայրապետյան, դաշնամուր, վոկալ, Արման Մնացականյան, հարվածային գործիքներ, Մակար Նովիկով, կոնտրաբաս, մենակատարներ՝ Մավր Սկրտչյան (բարիտոն), Սոֆյա Սայադյան (սոպրանո), Դանիել

Մելքոնյան (շեփոր)):

Կարևորելով սահմանափակումները համայնքներում ներդրումային ծրագրերի անհրաժեշտությունը՝ հուլիսի 28-ին ԿԳՄ Նախարարի տեղակալ Արա Խզմայանը «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի ղեկավարների հետ այցելեց Հին Խնձորեսկ և Հին Խոտ գյուղատեղիներ՝ բնակարանները ներդրումային ծրագրերին առնչվող հարցերն ու հեռանկարները:

ESCS.AM

համաներում հայտարարելու մասին» օրենքի ընդունումից հետո ընդամենը 11 հոգի են (Սյունիքից) դեռևս ներկայացել պատկան մարմիններին. նրանց դեմ հարուցված մեղադրանքը հանվել է, և հաշվառվել են պահեստազորում (հիմա որոշվում է նրանց պիտակությունը): Համաներումը վերաբերում է 27 տարին լրացած երիտասարդներին, ովքեր հետախուզման մեջ են: Ակնկալվում է, որ համաներումից օգտվել կամեցողների թիվն ի վերջո կաճի:

Իսկ հիմա... Ըստ Վահե Աղալարյանի՝ «Նրանք, ովքեր հանրապետությունում են, ամենայն պատասխանատվությամբ են ներկայանում, իսկ ովքեր դրսում են՝ դեռևս դժվարություններ են հարուցում»: Չորակույցային և գորահավաքային ծառայության սյունիքյան պատասխանատուի մտահոգությունները, սակայն, դրանով չեն ավարտվում:

– Կուզենայի պարտադիր զինվորական ծառայության գորակոչվողներին առավել առողջ տեսնել, ֆիզիկական տեսակետից՝ ավելի պատրաստ ու կոմիկած, – մեր գրույցն այդպես ամփոփեց ՀՀ ՊՆ 2 և 23Ծ Սյունիքի տարածքային ստորաբաժանման ղեկավարը:

Եվ որպես ավարտ սույն հրապարակման՝ մեր տղաներին կրկին ցանկանք բարի ծառայություն ու բարի վերադարձ: Չմոռանա՞ք՝ հենց նրանք են նաև լինելու շատ սպասվող արժանապատիվ խաղաղության իրական երաշխավորները...

ՍԱՄՎԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ

Հավերժ փառք Արցախյան պատերազմում Նահատակված հայոց քաջորդիներին



**Փոխգնդապետ
Վահագն Բաբայան,
հայրենասիրությունը
գեներով էր եկել**

Վահագն Վահանի Բաբայան. ծնվել է 1990թ. օգոստոսի 28-ին Տեղ գյուղում: Հաճախել է գյուղի դպրոցը, բարձր դասարաններում սովորել Ստեփանակերտի Քրիստափոր Իվանյանի անվան ռազմական վարժարանում: Բարձրագույն կրթությունը ստացել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում: Ամուսնացած էր՝ ունի երկու երեխա: Մանկուց տարբերվում էր՝ խաղերը ռազմի բեմադրություններ էին, հերոսները, ումից ուզում էր օրինակ վերցնել ու վերցրեց, միայն ու միայն ֆիդայիներ: Ազատամարտիկի ընտանիքում էր ծնվել Վահագնը, հայրենասիրությունը գեներով էր եկել, հայրենիքը գործով սիրելը գաղափարախոսությունն էր, այլ այն, ինչ տեսել էր մանուկ Վահագնը ծնված օրվանից:

Նրա գիտակցական կյանքը նվիրված էր բանակին. մտքին բանակաշինությունն էր, երազներում տարածաշրջանի լավագույն բանակն ունենալու տեսլականը: Իր երազանք-բանակի հասցեին քննադատությունն էր հանդուրժում, քանի որ 30-ամյա փոխգնդապետի սերն ու կիրքը բանակի հանդեպ անչափելի էին:

Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանն ավարտելուց հետո, սպայական ծառայության է անցել Արցախում՝ Մարտուկիում: Չիկվորներն ու ընկերները Վահագնին նկարագրելիս ասում են. «... Իսկական սպա էր, նրան հնարավոր չէր ծուղակը գցել. երբ իմացանք զոհվել է, հասկացանք, որ գիտակցաբար է արել եւ ուրիշ ելք չի ունեցել, բայց նա այն չէր փորձում, որ մահից հետո էլ իր պահած դիրքը, որ պահում էր...»:

Պատերազմի սկզբում մայրը Բաբայանին իր սիրազործությունների համար փոխգնդապետի կոչում է ստացել եւ Արցախի ՊԲ հրամանատար Ջալալ Հարությունյանի կողմից պարգևատրվել «Մարտական խաչ» մեդալով:

Չրուցում են բոլոր հետ, նա արցունքները կույ է տալիս. հպարտություն ու ցավ, անմոռնոք ցավ կա ձայնի մեջ՝ «Եղբայրս հերոս է՝ այդ բառի ամբողջական իմաստով, ինձ շատերն են պատմել, թե ինչպես է ընդդիմացել բոլորին, ոտքով 40 կմ քայլել, գտել ու շրջափակումից դուրս բերել բազմաթիվ զինվորների: Երբ 7 տարեկան դուստրը խնդրել է տուն գալ, եղբայրս պատասխանել է, թե դուք ապահով եք, այստեղ այնքան 18 տարեկան երեխաներ կան, որ կրակի տակ են ու նրանց մենակ չի կարելի թողնել»:

Կնոջ հետ բազմաթիվ հեռախոսազրույցներ է ունեցել պատերազմի ամբողջ ընթացքում, հույս է տվել, հավաստիացրել, որ ամեն ինչ լավ է լինելու, որ հաղթանակած տուն է վերադառնալու, որ իրենց երեխաները մեծանալու են խաղաղ ու ապահով, ավանդ...:

Նոյեմբերի 9-ին, հրադադարից ընդամենը ժամեր առաջ, թշնամին նկատել էր Վահագնի դիրքը՝ կենտրոնացրել ուժերը մեկ նպատակի համար՝ ամեն կերպ ոչնչացնել առյուծի պես կռվող հայ սպային ու նրա ջոկատը: Հրադադարից երկու ժամ առաջ թշնամին՝ օդային անդադար կրակով, հասնում է նպատակին՝

զոհվում է Վահագնը, բայց չի հանձնում դիրքը. նա սովոր էր պահպանել իրեն վստահված կյանքերն ու հողը՝ ինքն իրեն մի վերջին անգամ հավատարիմ մնաց... //



**Մակար Բեգլարյան «Եթե
այսօր չկանգնեցնեք
թուրքին, վաղը մեր
սերունդների համար
ավելի
ծանր է լինելու»**

Բեգլարյան Մակար Ջանիկի. ծնվել է 1980 թ. ապրիլի 8-ին Մեղրիում: Սովորել է Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Բարձրագույն կրթությունը ստացել է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում: 1998-2000 թթ. ծառայել է Մատաղիսում:

2010 թ. ամուսնացել է, ունի երկու երեխա: 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց: Այնուհետև, գրեթե բոլորը, հայրենիքի պաշտպանության գործը ստանձնեցին՝ առանց հասարակելու, առանց հրամանի, առանց կանչի, կամավոր: Սկզբում Մակարը հիմնականում սնուկը, ջուր ու ծխախոտ էր ստանում ռազմակառ, երբ սահմանին դուրս էր գալիս, նա էս ներգրավվում է ռազմական գործողություններում:

Մակարի մասին մեզ ընկերն է պատմում. «Մի տեսակ կապող օղակ էր ընկերների, հարազատների համար: Յուրահատուկ լավ մարդ էր, Աստված լավերին է տանում: Մակարի համար հայրենիքը կարեւորագույնն էր, նրան հետ պահել հայրենիքի պաշտպանության գործից անհնար էր, ասում էր՝ մենք չգնանք, ով պիտի գնա, իրեն վատ էր զգում, որ ազերիները մոտեցել էին Մեղրիին: Նրա հայրենասիրությունը հորից էր գալիս, հայրն էլ էր ազատամարտիկ, ազատ ու հպարտ ապրելու գաղափարը նա հորից էր ժառանգել...»:

Չրուցում ենք մարտադաշտի ընկերների հետ. «Մակարն այնքան ցավով էր ընդունում ստեղծված իրավիճակը, արդեն հասկանում էր, որ մեր գործերը լավ չեն, բայց բարկանում էր, երբ տեսնում էր, որ տղերքը հուսահատվում են, համոզում էր, լույսիսկ խնդրում, որ չհուսալքվեն, ասում էր, որ մեր պատվի հարցն է պաշտպանել մեր երկիրը, որ եթե այսօր չկանգնեցնեք թուրքին, վաղը մեր սերունդների համար շատ ավելի ծանր է լինելու...»:

Մակար Բեգլարյանը զոհվել է հոկտեմբերի 22-ին Նոնաձորի մերձակայքում: Հուղարկավորված է Մեղրիի գերեզմանատանը:

Մակարի երեխաները դեռ փոքր են, որդին հիշում է հայրիկին, գիտի, որ նա երկնքում է, գիտի, որ հայրիկը նայում է իրեն ու ամեն ինչ ասում է, որ հայրիկը երկնքում հպարտանա, դուստրը շատ փոքր է. հայրիկին նկարից է ճանաչում, բայց նա էլ գիտի, որ հայրիկը երկնքում է, որ նա գնացել է երկնքը խաղաղ պահելու... //



**Գևորգյան Դավիթ «Հողը
կանչում է, ես պիտի գնամ»**

Գևորգյան Դավիթ Աշոտի. ծնվել է 1980 թ. փետրվարի 14-ին Սիսիան քաղաքում: Սովորել է Սիսիանի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո մեկնել է ՌԴ:

Դավիթը չափազանց հայրենասեր ու ազգասեր էր՝ օտար երկրում հաստատվելու համար. վերադարձավ հայրենիք, պայմանագրային ծառայության անցավ Սիսիանի զորամասում:

Դավիթը դատեր ծնվելուց հետո երկար տարիներ որդու մասին էր երազել, շատ, չափազանց շատ էր ցանկանում տղա ունենալ: Երկար տարիների երազանքը նոր էր իրականացել՝ Աշոտ որդին հորից ու հորեղբորից հայրենիքի հանդեպ սեր ու թուրքի հանդեպ թշնամանք է ժառանգել, այդ մասին մեզ Դավիթի եղբայրը՝ Մխիթարն է պատմում. «Վրեժը դարձել է իմ ապրելու իմաստը, եղբորս տղան էլ զինվորական շորերն հագնում է, զինվորական կեցվածք ընդունում ու ասում, որ պիտի գնա թուրքերին կոտորելու: Եղբայրս սովորական մարդ չէր, նա էս երկիրը սեփական պատվի պես էր սիրում ու պահում, ընդհանրապես մեր ընտանիքում հայրենասիրությունը ամենամեծ արժանիքն էր համարվում, մեր երեխաներին էլ, անկախ սեռից, առաջին հերթին որպես հայրենիքի համար պայքարող ու ապրող մարդ ենք դաստիարակում: Պատերազմը չի ավարտվել, քանի մեր եղբայրների արյուն վրեժը լուծված չէ, քանի մեր հայրենի հողը թուրքի ձեռքին է...»:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց, Արցախում վիճակն ամեն օր ավելի ծանր էր դառնում, հողը կանչում էր իր որդիներին, հողը հեծում էր թշնամու ներկայությունից: Դավիթն առողջական խնդիրներ ուներ, որոնց պատճառով բժիշկներն արգելել էին Արցախ մեկնել, բայց Դավիթը մեկ պատասխան ուներ. «Հողը կանչում է, պիտի գնամ»: Արցախում Դավիթը միաժամ է «Հայրուկ» ջոկատին, պայքարում հայ տղամարդուն հատուկ բաշտությամբ: Օրեր շարունակ ջոկատը շրջափակման մեջ էր, բայց դիմադրում էին, եղբորը զանգահարում էր, խոսում, եղբայրը գիտեր, որ շրջափակման մեջ են, ցանկանում էր ինչ-որ կերպ հասնել նրանց, բայց Դավիթն արգելում էր, քանի որ գիտեր իրենց փրկությունը հրաշքով միայն կարող էր լինել, իսկ եղբոր իրենց միանալու ցանկությունը համազոր է ինքն իրեն մահվան դատապարտելուն:

Հոկտեմբերի 15-ից հետո Դավիթն այլևս կապի դուրս չէկավ, հարազատներին հայտնել էին, որ զոհվել է ԱՅՍ-ի արկից, բայց նրանք մի թաքուն հույս էին փայփայում՝ Դավիթին ողջ գտնելու հույսը: Ադրբեջանի ու սպասումի տանջալից օրերն ավարտվեցին 2021 թ. հունվարի 8-ին, երբ ՂՆԹ հետազոտությունը հաստատեց՝ Դավիթը միացել է անմահների զնդին...:

2021 թ. հունվարի 10-ին, Սիսիանի զինվորական պանթեոնում զինվորական պատիվներով հողին հանձնեցին Նահատակված հերոսի աճյունը: //



**Յուրի Գևորգով.
պատերազմը խլեց
լավագույններին**

Յուրի Նիկոլայի Գևորգով. ծնվել է 1985 թ. հուլիսի 9-ին Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության Բաքու քաղաքում: Բաքվի ջարդերից հետո ընտանիքը հանգրվանել է Այոնյաքում՝ Կապանում, ապա՝ Քաջարանում: Սովորել է Քաջարանի թիվ 1 դպրոցում: 9-րդ եւ 10-րդ դասարանները սովորել է Այոնյաքի միջնակարգ դպրոցում: 2003 թ. զորակոչվել է բանակ, ծառայել է Արցախի Հանրապետության Մարտակերտ քաղաքի զորամասում, զինվորական մասնագիտությամբ ակադեմիայի Նշանառու էր:

Աշխատում էր Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ փոխարկիչի մեքենավար:

2018 թ. ամուսնացել է, ունի երկու դուստր: Յուրիի կրտսեր դուստրը ծնվել է հոր զոհվելուց ամիսներ անց: Ավագը երկու տարեկան է. հայրիկին լավ է հիշում, հայրիկի նկարները ցույց է տալիս երկու ամսական քույրիկին, որ քույրիկն էլ ճանաչի հայրիկին, Սրբուհին մեկ այլ զբաղմունք էլ ունի՝ ժամերով նստում է մուտքի դռան մոտ ու հետեւում ոտնաձայներին, որ հայրիկի գալու պահը հանկարծ բաց չթողնի...:

Յուրիի մասին մեզ պատմում են Այոնյաքի միջնակարգ դպրոցի ուսուցիչները: Մոտ 20 տարի անց էլ ուսուցիչի ուսուցչուհի Էլզա Բաղդասարյանը չի մոռանում իր համեստ, ժպտերես աշակերտին. «Յուրիի բնավորության ամենաառանձնահատուկ գիծը համեստությունն էր, բացառիկ հարգալից տղա էր, չարաբաստիկ պատերազմից օրեր առաջ եմ հանդիպել՝ պահպանել էր իրենց սերունդին հատուկ հարգանքն ու միայն իրեն պատկանող յուրահատուկ ժպիտը: Հիշում են, որ շատ արագ մերվեց դասարանին՝ իր մարդկային բնավորության օգնությամբ: Շատ-շատ եմ ավիստում, որ նրա նման երիտասարդն այսօր մեր կողքին չէ, ինչ-որ բան սխալ է՝ նրա պես մարդիկ պիտի երկար ու երջանիկ ապրեն...»:

Ուսումնական գծով տեղակալ Աշխեն Իսրայելյանի հայացքում բարի հուշերի ժպիտն ու ավիստանքն իրար են փոխարինում. «Մեր Յուրիի ժպիտը մոռանալ անհնար է, համեստ տղա էր, բայց սեփական կարծիքն ուներ ու իր տեսակետը համեստորեն առաջ էր տանում: Հերոս դառնալու համար մի վայրկյան է պետք, մարդ լինելու համար՝ մի ամբողջ կյանք. Յուրին հենց այն տեսակն էր, ով իր ապրած կարճ կյանքի ընթացքում ապացուցեց, որ մարդ է եւ լավ մարդ...»:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. սեպտեմբերի 28-ին Յուրին միացել է Քաջարանի մերձակա սահմանները պաշտպանող խմբերին: Հոկտեմբերի 8-ին կամավոր մեկնել է Արցախ, մասնակցել Ջրականի /Ջաբրայի/ եւ Իշխանաձորի պաշտպանության մարտերին:

2020 թ. հոկտեմբերի 17-ին զոհվել է Խուրդաֆերիկի ջրամբարի մոտակայքում:

Յուրի Գևորգովը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: //

**ԷՅԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՊԱՏՈԱՍՏԵՑ
ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԲԱՂԱՆԱԼԸ**

ՆԵՐՍԵՍ ՇԱԴՈՒՆՑ. «Տեղ համայնքը 60 կմ շփման գիծ ունի Ադրբեջանի հետ, իսկ մոտ 350 հա հողատարածք հայտնվել է հակառակորդի տիրապետության ներքո»

Սկիզբը՝ էջ 2

Զարվածառի:

– Համայնքը հիմնականում սահմանակից է Նախկին Լաչինի վարչական շրջանին, Խոզ-Նավարի վերևի հատվածը սահմանակից է ԱԼ լճի տարածքին:

– **Նախընտրական քարոզարշավի ընթացքում՝ Տեղ համայնքում ընդգրկված գյուղերին պատկանող հողերի մասին ինչ-որ թիվ շրջանառության մեջ դրվեց, որոնք ղեկավարների 18-ից հետո հայտնվել են հակառակորդի վերահսկողության ներքո, խոսքը 350 հեկտարի մասին է: Եթե կարելի է, ճշտենք այդ տեղեկատվությունը:**

– Տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, մոտ 200 հեկտարը Խոզնավարի վարչական տարածքի արտավայրերից է, որ գտնվում է ԱԼ լճի հարակից տարածքում, իսկ ընդհանուր առմամբ՝ ունենք վարելահողեր, խոտհարքեր, որոնք, GPS համակարգով առաջնորդվելով, անցել են հակառակորդի տիրապետության ներքո:

Նախկինում առաջնորդվել ենք 1969 թվականի քարտեզներով:

1986 թվականին Հայաստանի և Ադրբեջանի կողմից ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ վարդիմիր Մովսիսյանի գլխավորությամբ, կատարվել է սահմանների ճշգրտում, այնուհետև, Գորիսի շրջխորհրդի գործկոմի 1991 թ. ապրիլի 14-ի որոշմամբ, այդ հողատարածքները սեփականաշնորհվել են: Ադրբեջանցիները GPS-ով առաջնորդվելով պատճառաբանում են նրանով, որ 1986 թ. սահմանորոշումները հաստատված չեն երկու հանրապետության կառավարությունների կողմից:

Սահմանների ճշգրտումը միջկառավարական խնդիր է, որը պետք է լուծվի, որովհետև բնակավայրերը տարբեր չափի կորուստներ ունեն վարելահողերի ու արոտավայրերի տեսքով, որոնց մի մասը բնակիչների, մյուս մասը՝ համայնքային սեփականություն է:

– **Փաստորեն 350 հեկտարի մի մասը սեփականաշնորհվել է ժամանակին. մարդիկ կանոնավոր հողի հարկ են վճարել, ունեն սեփականության վկայական, բայց նրանց սեփականությունը հայտնվել է Ադրբեջանի վերահսկողության ներքո: Ի՞նչ է արվում այդ հողատարածքները վերադարձնելու ուղղությամբ:**

– Մենք, որպես տեղական ինքնակառավարման մարմին, մեր պարտականությունները հավուր պատշաճի կատարել ենք՝ տեղեկացրել ենք և կառավարությանը, և Սյունիքի մարզի հարցերով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովին: Տարբեր գերատեսչություններ տեղյակ են խնդրին, նույնիսկ կարաստի պետական կոմիտեին են ներկայացրել խնդրի հանգամանքները՝ փաստերով, քարտեզներով ու վկայականներով, հիմա տեսնենք՝ ինչ որոշում կկայացնեն:

– **Միջգերատեսչական հանձնաժողովի նիստերից մեկ-երկուսը տեղի են ունեցել Տեղ համայնքում: Ի՞նչ խնդիրներ են բնարկվել անվտանգության տեսակետից:**

– Անվտանգության վերաբերյալ հարցեր ենք բարձրացրել՝ սահմանում խնդիրներ ենք ունենում, երբեմն միջադեպեր են գրանցվում անասուններն արոտի հանելու ժամանակ, քանի որ տարանջատված չէ՝ փշալար, էլեկտրական հովիվ տեղադրված չէ, խրամատ պատրաստված չէ:

Միջգերատեսչական հանձնաժողովի հետ կարևոր մի հարց ենք լուծել՝ մեր բեռնատար մեքենան, որ համայնքային սեփականություն էր, ուղարկել էինք մարտադաշտ, պայթել է, հետ չենք կարողացել բերել, միջգերատեսչական հանձնաժողովի միջնորդությամբ ձեռք ենք բերել նոր մեքենա:

– **Կուզենայինք անդրադառնալ կոմբայնի և կոմբայնավարի հետ վերջերս**

տեղի ունեցած միջադեպին, ավելի ճիշտ՝ դրանից հետո տարածված մի տեղեկության, թե իբր Շակի դուզ կողմող տարածքում Ձեր ու ադրբեջանցիների մասնակցությամբ կատարվել են սահմանազման կամ սահմանազատման աշխատանքներ: Իսկապե՞ս որոշ հատվածներում սահմանազմում է կատարվել, թե՞ դա ուղղակի ժամանակավոր պայմանավորվածություն է:

– Իհարկե, մենք դրա իրավասությունը չունենք, դրանով պետք է զբաղվեն միջկառավարական գերատեսչությունները, բայց տվյալ պահին ներկա էին և Ադրբեջանի, և Հայաստանի Հանրապետության, և Ռուսաստանի Դաշնության զինվորականները, ու փորձեցինք խնդրին ժամանակավոր լուծում տալ, քանի որ վերջին 15 օրվա ընթացքում անընդհատ տեղի էին ունենում միջադեպեր: Մոտ 2 կմ երկարությամբ սահմանազծում արեցինք, եթե կարելի է այդպես կոչել, որպեսզի մեր բնակիչները չփոխվեն:

– **Այսինքն, դա ժամանակավոր լուծում է:**

– Այո, իհարկե, ժամանակավոր լուծում է, այն էլ՝ մի փոքրիկ հատվածում:

– **Խոսենք մոտ 60 կմ սահմանի անվտանգության համակարգի մասին... Նախ՝ սահմանի այդ հատվածում ռուսական խաղաղապահ կամ սահմանապահ ուժեր տեղակայված են, թե՞ ոչ:**

– Խաղաղապահ զորքեր այս պահին Ձեր նշած տարածքում տեղակայված չեն, սահմանապահ զորքերն են, որոնք ի սկզբանե են եկել ու գտնվում են Տեղ գյուղի վարչական տարածքում՝ Կարմիր բլուր կոչվող վայրում:

Մենք հողահատկացում ենք արել, որ կառավարությունը, անհատույց օգտագործման իրավունքով, նրանց ժամանակավոր հողատարածք տրամադրի, քանզի շինություններ են կառուցում իրենց ծառայությունը կատարելու համար:

Նրանք մի քիչ խորքում են կանգնած, բայց ցանկացած սահմանային միջադեպի մասին տեղյակ ենք դարձնում անմիջապես և փորձում ծագած խնդիրներին լուծում տալ: Ինչ վերաբերում է համայնքի մյուս գյուղերին, այնտեղ էլ փորձում ենք ռուս սահմանապահների ծառայությունն կազմակերպել:

– **Գորիս-Ստեփանակերտ մայրուղու վրա՝ Տեղ գյուղի վարչական տարածքում, ստեղծվել է նոր հսկիչ կետ՝ մեր զինվորական ոստիկանության կողմից: Արդյո՞ք իրավիճակի կայունացմանը դա նպաստ է բերում:**

– Այո, հսկիչ կետն արդեն կա, նրանք հավուր պատշաճի ծառայություն են իրականացնում և, կասե՛ի, Եակնորեն նպաստում են շատ-շատ հարցերի կարգավորմանը:

– **Մեր սահմանապահների կողմից ստեղծված մարտական դիրքերը բավարար են սահմանի անվտանգությունն ապահովելու համար:**

– Ինչքան շատ լինեն մեր հենակետերն ու դիրքերը, այնքան ավելի հանգիստ ու ապահով կլինենք: Իհարկե, ՀՀ ՇՈՒ և ԱԱԾ ստորաբաժանումները կատարում են իրենց առջև դրված խնդիրը, բայց ցանկալի է, որ հենակետերն ավելի շատ լինեն:

– **Սահմանի կահավորվածության մասին. ի՞նչ է արվել 2020 թ. դեկտեմբերի 18-ից հետո:**

– Այդ հարցերը բնարկվել են թե՛ միջգերատեսչական հանձնաժողովում, թե՛ ՀՀ ՇՈՒ համապատասխան կառույցներում, բայց, կարող ենք ասել, արվել է այնքան, որքան կարողացել են:

– **Համայնքի գյուղերում հետպատերազմական շրջանում տիրող իրավիճակի մասին. գյուղերից հեռացողներ կա՞ն:**

– Դեկտեմբերի 1-ից հետո, երբ Արցախի Հանրապետության Քաջաթաղի շրջանից տեղահանում եղավ, բնակիչները, ովքեր մեր

գյուղերից էին գնացել Քաջաթաղ՝ ապրելու, վերադարձան իրենց Նախկին բնակավայրեր: Մի կողմից շատ վատ է, որ նրանք տեղահանվել են, մյուս կողմից՝ ողջունելի է, որ վերադարձել են իրենց բնակավայրեր և ուրիշ տեղ չեն գնացել: Բայց կան նաև համայնքից մեկնողներ, ովքեր զբաղվում էին անասնապահությամբ, դաշտավարությամբ, իսկ հիմա՝ տարածքների հետ կապված, իրենց աշխատանքներն այստեղ նորմալ շարունակելու հնարավորություն չեն տեսնում:

Ժողովրդի շրջանում խուճապ չկա, հակառակը՝ մարտականորեն են տրամադրված, ամեն մեկն իր գործն է կատարում:

– **Համայնքի գյուղերի տղամարդիկ ինչպե՞ս արձագանքեցին պայմանագրային զուսմարտակներ ստեղծելու Նախաձեռնությանը, տարիքային շեմի խնդիր էր ծագել, ինչպե՞ս կարգավորվեց:**

– Երկու տեսակի խնդիր էր առաջացել. տարիքային շեմի հետ կապված խնդիրն օրենսդիր լուծեց՝ տարիքային շեմը բարձրացվեց: Մարդիկ կային, որ իրենք էին հայտնի պայմանագրային ծառայության անցնելու ցանկություն, քանի որ ձմռանն աշխատանք չի լինում, և ցանկանում էին իրենց զբաղվածության հարցը լուծել բանակային ծառայությունում ընդգրկվելու միջոցով, բայց որոշակի խնդիրներ առաջացան: Հիմա փորձում ենք այդ հարցերին նույնպես լուծում տալ...

– **Արժե՞ արդյոք սահմանային գյուղերի տղամարդկանց զենք տրամադրել:**

– Ճիշտ ու տեղին հարց է, ինքնապաշտպանական մարտերը սկսելու պահից զենք ենք ստացել և զինել ենք մարտական հերթապահություն իրականացնող տղաներին, դրան զուգահեռ փորձել ենք իրավական տեսանկյունից կարգավորել հարցը, զինանոցներ ենք պատրաստել. այս պահին զինանոց ունենք Կորնիծորում, Տեղում և մյուս գյուղերում: Դիմել ենք պատկան մարմիններին՝ լրացուցիչ զենք տրամադրելու խնդրանքով, հարցը մինչև հիմա քննարկման փուլում է:

Մի քանի ամիս է՝ զենքերը մեր տրամադրության տակ են, որևէ խախտում չի եղել:

Կարծում են՝ սահմանում ապրող յուրաքանչյուր աղեկվատ, զենք բռնել կարողացող մարդ պետք է զինված լինի:

– **Ձեր պատասխաններից հասկացանք, որ պատերազմի ժամանակ ձևավորված ինքնապաշտպանական ջոկատները մինչև հիմա գործում են:**

– Այո, ցանկացած պահի մեզանից 15 րոպե ժամանակ է պահանջվում, որպեսզի կազմ-պատրաստ ներկայանանք նշանակված վայր:

– **Արոտավայրերում տիրող իրավիճակը. ինչքանով տեղյակ ենք՝ արոտավայրերի մի մասը գտնվում է ԱԼ լճի և Սազի լճի մերձակայքում, այս տարի գյուղացիները կարողացել են այդ տարածքներից օգտվել:**

– Խոզնավարի արոտավայրերի մի մասն այս պահին նպատակին չի ծառայում, գյուղերի ֆերմերներն իրենց անասունները տեղափոխել են հեռագետ արոտներ՝ Սիսիանի տարածաշրջան, որն էլ լրացուցիչ դժվարություններ է առաջացրել:

Ժամանակին մեր համայնքում շատ էինք հպարտանում անասնազիսաբանակով՝ մոտ 60 հազար մանր եղջերավոր անասուն, որը կազմում էր Սյունիքի մարզի անասնազիսաբանակի 50 տոկոսը, ունեինք նաև 10 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն, բայց քանի որ ձմռանն անասուններն իջեցնում էինք Արաքսի հովտի արոտավայրեր, որը հիմա մեր վերահսկողությունից դուրս է, անասնազիսաբանակի 60 տոկոսը վաճառվեց՝ կեր չունենալու պատճառով: Հիմա փորձում ենք եղածը պահել...

– **Մի քանի խոսք էլ՝ բերքահավաքի ընթացքի մասին, քանի որ խոտհունձը գրեթե ավարտվել է և սկսվել է հացահա-**

տիկային մշակաբույսերի բերքահավաքը, ինչպե՞ս է բերքի վիճակը, կա՞ն հողատարածքներ, որ ստեղծված իրավիճակի պատճառով չեն մշակվել:

– Խոտհունձը սկսվել է գարնանը և շարունակվելու է մինչև խոր աշուն, քանի որ Խոզնավարի որոշ խոտհարքեր ծովի մակարդակից բարձր են... Ներկայումս այնքան լուրջ է անասնակերի վիճակը, որ գյուղացիները վաճառում են նույնիսկ ծղոտը:

Հացահատիկային մշակաբույսերի մասով՝ նոր մշակույթ է ձևավորվում բնակիչները ձեռք են բերում նոր տեսակի սերմեր, թունաքիմիկատներ և այլն: Պետք է փորձենք բարձրարժեք մշակաբույսեր ցանել, քանի որ տարածքները պակասել են:

– **Քանիցս լսել և լսում ենք մտահոգություններ խմելու ջրի վերաբերյալ, ինչպե՞ս է լուծվելու այդ խնդիրը:**

– Խոզնավար, Վաղատուր և Խնածախ գյուղերում խմելու ջուրը համայնքային ենթակայության է:

Խնածախը խմելու ջրի լուրջ խնդիր ունի, տարիներ շարունակ այդ բնակավայրն օգտագործել է խորքային հորերի ջուր և գյուղի ներքևի հատվածում ունեցել է մեկ աղբյուր: Հիմա ծրագրով նախատեսված աշխատանքները սկսել ենք՝ մոտ 100 մլն դրամ արժողությամբ ծրագիր է՝ 9 հազար մետր հեռավորությունից գյուղի համար ջուր ենք բերելու, և մեր մասով ներդրում ենք արել:

Նույնիս անում ենք Վաղատուրում. ներքին ցանցի հետ կապված խնդիր կա, և փորձում ենք այն փոխել, որոշ մասն էլ փոխելու ենք երկրորդ փուլով:

Իսկ «Վեդիա Ջուր» ՓԲԸ-ին կառավարության որոշմամբ ժամանակին նվիրատվություն ենք արել մեր գույքը՝ ներքին ցանցը՝ ամբողջությամբ նոր՝ թե՛ Քարաշենում, թե՛ Արավուսում, թե՛ Տեղ գյուղում, թե՛ Կորնիծորում: Համայնքի խոշորացումից հետո չեն տեսել, որ այդ ընկերությունը որևէ ներդրում ակի մեր համայնքի ներքին ցանցի վրա: Որոշ տեղերում վթարներ ենք ունենում... Կառավարություն ենք դիմում... Բայց խմելու ջրի խնդիրը կապված է նաև ոռոգման ջրի հետ: Ոռոգման ջրի խնդիր ունենք և Կորնիծորում, և Տեղ գյուղում, և Քարաշենում, և Արավուսում, այդ պատճառով էլ բնակիչների մի մասը փորձում է խմելու ջուրն օգտագործել ոռոգման նպատակով: Ուստի՝ եթե լուծվի ոռոգման ջրի խնդիրը, 50 տոկոսով լուծված կլինի նաև խմելու ջրի խնդիրը:

– **Պարոն Շադունց, Աժ արտահերթ ընտրությունից առաջ ծնվեց ևս մեկ (այսպես կոչված) բաղաբանական ու՞ «Վերածնվող Հայաստան», և քանիցս հայտարարվեց, թե Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցն այդ կուսակցության հիմնադիրների հետ է, նույնքան անգամ էլ հերքվեց այդ տեղեկատվությունը: Պարզություն մտցրե՞ք շատերին հետաքրքրող այդ հարցում:**

– Որոշակի հարցերում համակարծիք ենք եղել և համագործակցել ենք մարզի համայնքների ինքնապաշտպանական գործողությունների ժամանակ, բայց ես այդ կուսակցության անդամ չեմ եղել ու չեմ:

– **Մենք այսօր հասցրել ենք բնակիչների հետ գրուցել, մարդիկ տեղյակ են, որ առաջիկայում ՏԻՄ ընտրություններ կլինեն նաև Տեղ գյուղում, ու լսեցինք կարծիքներ՝ մարդիկ ցանկանում են Ներսես Շադունցին վերընտրված տեսնել համայնքի ղեկավարի պաշտոնում, իսկ ի՞նչ կարծիքի եք դուք:**

– Դժվարանում եմ այդ հարցին պատասխանել, բնակիչների մեջ մարդիկ կան, որ փորձում են ինձ համոզել, որ շարունակեն աշխատանքը... Որոշողը ժողովուրդն է, ժամանակը ցույց կտա:

– **Վերջին հարցը՝ դուք մեր մարզի այն համայնքապետներից եք, որ շատ սերտ համագործակցում են լրատվամիջոցների հետ, ասել է թե՛ կողմնակից եք թափանցիկ, հրապարակային, գործունեությանը, դա օգնում, թե՛ խանգարում է Ձեր աշխատանքին:**

– Հանրությունը տեղեկացված պիտի լինի, դրա կարիքը կա: Եվ ուրեմն՝ ինչո՞ւ պիտի լրագրողների համար հասանելի չլինենք: Կարծում եմ՝ մաքուր ու ճիշտ ապրելը շատ գեղեցիկ բան է: Եվ հանրությունից թաքցնելու բան չունենք...

ՀԱՐՑԱԶՈՐՈՒՅՑԸ՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Հայկական Կերեն գյուղի վերջին օրը

2020 թ. հոկտեմբերի 18-ին Կապանին սահմանակից՝ Արցախի Հանրապետության Կերեն գյուղը տարիանելու հրաման եկավ Զառաթաղի շրջվարչակազմից: Անհրաժեշտ փաստաթղթերն էի հավաքում, երբ գյուղի առաջին բնակչի, գյուղը հիմնողի ու անվանակոչողի կինը եկավ ու շենքից ձայնեց.


– Արի, թե կռնաս, Թումայանս հեղե Դիտակետ նստե, վար չի գա:

Օդում երկու անօդաչու կար, շտապողականություն ու վախ, բայց չէի կարող Թումայանին վերահաս վտանգի առաջ թողնել, բարձրացա Դիտակետ (գյուղի բարձր կետերից մեկի անունն էր): Թումայանը միայնակ ծխում էր.

– Եկար, – ծոր տվեց, – նստի, մի վախեցի՜ թուրքն ըստե չի հասնի, որ հասավ ստե, ըշտը շայաստան է կհասնի, դու չիդես 92 թվին ես տարածքներից թուրքը կրակի տակ է պահել Կապանից, Զառաթաղից, Մեղրիից, Իրանից շայաստանի մյուս բաղաբեր գնացող մեքենաները: Են ժամանակ Պաշտպանության նախարարը Վազգենն էր, Իրանյանը է՛ ցակցած գնով ազատագրել էս տարածքները: Միսիանի գունդն ու Կապանի վաշտը, համատեղ գրոհով, մի երկու օրում ազատագրել են 11 գյուղ, լեզենդար տղերք են զոհվել՝ Գրիգորյան Արշակը, Միկրոբը... Դուք կռնաք էթաք, ես չեմ գա, իմ տունն ամենաերեսագրողն է, կտեսնիս՝ հիվադ էլ ծուխ կելնի, որ թուրքն աղբրին էլ հասնի, ես իմ տան կրակը չեմ մարի:

Հասկացա, որ համոզելն իզուր է. այս մարդը երկրաշարժ է տեսել (գյուղից է), իր տունն է կառուցել ու երկրորդ անգամ անտուն դառնալ չի ուզում, հրաժեշտ տվեցի:

Երեկոյան 9-ի տխրահռչակ հայտարարությունից հետո վերադարձա Կերեն, ցուրտ էր, մառախլապատ, թուրքը Կերեն չէր մտել, բայց գյուղը դատարկ էր, շուրջը խրամատներ



էին փորված, միայն Թումայանի տան ծխելուլույզից էր ծուխ դուրս գալիս, կինը բակում բաժակներ էր վճանում, Թումայանը ծխում էր, գլուխը բարձրացրեց.

– Բարով ես եկել, տեսար, որ թուրքը Կերեն չհասնի, հայտարարությունը լսար չե՛ գորքերը կանգ են առնում իրենց գունդերու վայրերում:

– Բայց վարչապետն ասաց, որ պետք է վերադառնանք ԽՍՀՄ սահմաններին, այս տարածքներն իրենցն է եղել:

– Ի՞նչ սահման, ինչ ԽՍՀՄ, ի՞նչ իրանց հող, են ժայռին Գրիգորի բերդն է, 2011-2013 թթ. Կերենի տարածքը, ԵՊՀ Հնագիտության ամբիոնի վարիչ Արտակ Գևուհու ղեկավարությամբ պեղվեց, բացված դամբանադաշտը հայկական է, Քրիստոսից առաջ այստեղ հայեր են ապրել, Լենինից հետո՝ թուրքեր, հիմա դու ըստ՝ սա ո՞ւմ հողն է, ըսել եմ, էի կըսեմ՝ իմ տան ծուխը չի մարելու:

Դեկտեմբերի 17-ին մի քանի ժամ տրվեց Կերեն համայնքը՝ Կերեն, Գրիգոր, Սպիտակաշեն գյուղերն Ադրբեջանին հանձնելու համար: Թումայանի տան ծուխն, այս անգամ ուղիղ իմաստով, չմարեց՝ դուրս գալուց առաջ փոքր որդին կրակի տվեց տունն ու շուրջ երեք տասնամյակ բրտիկներով վաստակած ունեցվածքը...

ՏԻԳՐԱՆՈՒԿԻ ԲԱԴԱՆԱՅԱԼ

Մեդալների հարուստ ավարով

Մայրաքաղաքի «Դինամո» մարզադահլիճում հուլիսի 27-ին եւ 28-ին տեղի ունեցավ քիթ-բոքսինգի ուժեղագույն ակումբների հանրապետության առաջնությունը: Այս անգամ ես իրենց բարձր կարգը հաստատեցին քիթ-բոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբի սաները (մարզիչ, վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյան): Կապանցի պատանի բռնցքամարտիկները մայրաքաղաքից մեդալների հարուստ ավարով վերադարձան՝ 9 ոսկի, 3 արծաթ: Ընդ որում՝ 13-15 տարեկանների մրցապայքարում Վաչե Գյուլբուրաջյանը (մինչեւ 52 կգ քաշային կարգ) եւ 7-9 տարեկանների մրցապայքարում Տիգրան Դավթյանը (մինչեւ 36 կգ քաշային) երկու անգամ մասնակցեցին (երկու ոճով) եւ երկու անգամ էլ բարձրացան պատվո պատվանդանի ամենաբարձր աստիճանին: Մրցանակակիրները պարգևատրվեցին գավաթով, մեդալով և պատվոգրով:

Հաջողություններն ակումբի մարզիչ Արայիկ Սարգսյանի հետեւողական աշխատանքի շնորհիվ է, ով, ի դեպ, մրցումներից հետո արժանացավ պատվոգրի՝ Հայաստանի քիթ-բոքսինգի զարգացման, ամրապնդման եւ ֆեդերացիայի հետ համագործակցության համար:

Մի քանի օր առաջ ուրախ լուր հայտնվեց լրահոսում. միջազգային օլիմպիական կոմիտեի (ՄՕԿ) հերթական նստաշրջանում



քիթ-բոքսինգը ճանաչվել է օլիմպիական մարզաձև: Մտում է ենթադրել, որ պատանի քիթ-բռնցքամարտիկների հետեւողական պարասպորտիստների դեպքում, կարող ենք ակնկալել, որ այդ մրցաձևում ես, ինչպես կապանցի հեռազատկորդ Լեւոն Աղայանը, կունենանք մեր պատվիրակը հաջորդ օլիմպիական խաղերում: Քիթ-բոքսինգի հանրապետական ֆեդերացիան մարզաձևի ակումբների մարզիչների առջեւ խնդիր է դրել լրջորեն հետևել պատանի մարզիկների վարպետության աճին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մահացել է Սիլվա Գեւորգյանը

Կապանի թիվ 6 հիմնական դպրոցի կուլեկտիվը անդառնալի կորստի ցավ է ապրում և սգում սիրված ու հարգված ուսուցչուհու՝ Սիլվա Գեւորգյանի անժամանակ մահը:

Դժվար է գրել հարազատ դարձած մարդու, գործընկերների համար անչափ սիրելի գործընկերոջ մասին, ով օրեր առաջ մեզ հետ էր: Դժվար է գիտակցել, որ այլևս մեր կողքին չէ նա:

Սիլվա Գեւորգյանը հմուտ մասնագետ էր, լեզվի գերազանց գիտակ, դասավանդման յուրատեսակ ու արդյունավետ մեթոդների էր տիրապետում: Նա մեծ սիրով էր իր մասնագիտական գիտելիքները հաղորդում երեխաներին:

Մենք կարողուք կիիշենք նրա մասնագիտական խորհուրդները: Ճապարհեմ, բարեհամբույր և սրտաբաց մարդու, սիրունատես կնոջ, հոգատար, ընտանիքի ինքնագիր մոր, նրբանկատ տատիկի և միշտ օգնության պատրաստ, կարեկցող ընկերոջ, հոգեբան-մանկավարժի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա հարազատների, գործընկերների, աշակերտների և բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ՎԱԴԱՆԻ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ներքոգրյալ մանկավարժական աշխատողի թափուր տեղերի համար.

- «Աշխատանքային գործունեության ընդհանուր հիմունքներ» մոդուլը դասավանդող դասախոս
 - «Սոցիալական աշխատանք» մասնագիտության մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոս
 - «Հոգեբանության հիմունքներ» մոդուլը դասավանդող դասախոս
 - «Սոցիալական մանկավարժություն» մոդուլը դասավանդող դասախոս
 - «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոս
 - «Մանկաբարձական գործ» մասնագիտության մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոս
 - «Ֆիզիկական կուլտուրա» առարկան դասավանդող դասախոս:
- Թափուր տեղերի համապատասխանության նկատմամբ սահմանված պահանջներն են.
- Ուսումնական պարագլուխներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործու-

նեություն փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին է ներկայացնում ներբնույալ փաստաթղթերը՝

- դիմում,
 - կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
 - անձնագիր (բնօրինակը և պատճենը),
 - աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
 - ինքնակենսագրություն,
 - մեկ լուսանկար՝ 3x4 չափի:
- Արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը): Փաստաթղթերն ընդունվում են բոլեջի մասնաշենքում, ս.թ հուլիսի 30-ից մինչև օգոստոսի 12-ը ներառյալ, ամեն օր, ժամը 10:00-ից մինչև 16:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2021թվականի օգոստոսի 27-ին ժամը 12:00-ին բոլեջում: Հասցե՝ ք. Կապան, Շահումյան 37ա, հեռախոս՝ 0285-5-25-70, 093-777-663:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՆ «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ բոլեջի ներքոգրյալ թափուր հաստիքների համար

1. Հայոց լեզվի և գրականության մանկավարժ
 2. Ռուսաց լեզվի և գրականության մանկավարժ
- Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է,
 2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
 3. Անձնագիր (բնօրինակը և պատճենը),
 4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
 5. Ինքնակենսագրություն

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
 8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ (բնօրինակը և պատճենը),
 9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
- Փաստաթղթերն ընդունվում են մինչև օգոստոսի 27-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9.00-18.00՝ բացի շաբաթ և կիրակի օրերից: Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 30-ին ժամը 10.00-ին «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում հասցեն՝ ք. Կապան Ռ. Մելիքյան 2: Տեղեկությունների համար զանգահարել՝ /0285-2-48-91, 077-02-63-20/ հեռախոսահամարով:

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԿՐԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԵՑՄԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32: (+374 91) 45 90 47 (+374 77) 45 90 47 syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրթությունը ներկայացնելու մեթոդագիր վիճակում: «ԳՐՎԱԾԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հոլում «Սյունյաց երկիր» պարտադիր է: Թ՛վազային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 30.07.2021թ.: